Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունիսի 4-ի N 595 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԱՊԻ ԽԱՓԱՆՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՏՐԱՄԱ-ԴՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼՈՒ

1. Սույն կարգով կանոնակարգվում են կապի խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը կապ տրամադրող կազմակերպությունների (այսուհետ՝ օպերատոր) կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին տրամա-դրվելու և այդ տեղեկատվությունը լիազոր մարմնի կողմից հարկային մարմնին տրա-մադրվելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով կապի խափանում համարվում է օպերատորի կողմից ինտերնետային կապի ծառայությունների մատուցման ընդհատումը, որը տեղի է ունեցել օպերատորի մեղքով, երբ վերջնական օգտագործողի կողմից անհնար է դառնում ինտերնետային կապի միջոցով իրական ժամանակում դուրս գրել հաշվարկային փաստաթուղթ համարվող ուղեկցող փաստաթուղթ:

3. Սույն կարգի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ կապը խափանվել է վերջնական օգտագործողի մեղքով, կամ ծառայություններ մատուցողն իր իրավասությունների շրջանակում դադարեցրել կամ ընդհատել է ծառայությունների մատուցումը հաճախորդին՝ վերջինիս հետ կնքված համաձայնագրի հիման վրա:

4. Հարկային մարմինը կապի խափանման դեպքերի վերաբերյալ հարցում է ուղարկում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ համաձայն N 1 ձևի:

5. Լիազոր մարմինը հարկային մարմնի հարցման ստացման օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հարցում է ուղարկում համապատասխան օպերատորին:

6. Խափանումների առկայության դեպքում օպերատորը սույն կարգի 5-րդ կետում նշված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմնին է տրամադրում տեղեկատվություն՝ համաձայն N 2 ձևի, իսկ խափանումների բացակայության դեպքում՝ դրա մասին տեղեկանք:

7. Լիազոր մարմինը սույն կարգի 6-րդ կետում նշված տեղեկատվությունը ստացման օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է հարկային մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ

ԿԱՊԻ ԽԱՓԱՆՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 595 -Ն որոշման համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն օպերատորի մեղքով տեղի ունեցած կապի խափանումների դեպքերի վերաբերյալ՝ ստորև նշված տվյալներին համապատասխան՝

NN ը/կ	Կապի ծառայություն մատուցող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ)		Փաստաթղթի դուրսգրման փորձի կատարման (կապի խափանման) վայրի հասցեն	Կապի խափանման ժամանակը (րոպեն, ժամը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)		Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ), որը փորձ է կատարել հարկային մարմնի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ ուղարկել ուղեկցող փաստաթուղթ	
	անվանումը	ՀՎՀՀ-ն		սկիզբը	ավարտը	անվանումը	ՀՎՀՀ-ն
1	2	3	4	5	6	7	8

1՝ լրացվում է հերթական համարը:

2՝ լրացվում է կապի ծառայություն մատուցող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) անվանումը:

3՝ լրացվում է կապի ծառայություն մատուցող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հարկ վճարողի հաշվառման համարը:

4՝ լրացվում է փաստաթղթի դուրսգրման փորձի կատարման (կապի խափանման) վայրի հասցեն:

5՝ լրացվում է կապի խափանման սկիզբը (րոպեն, ժամը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը):

6՝ լրացվում է կապի խափանման ավարտը (րոպեն, ժամը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը):

7՝ լրացվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ), որը փորձ է կատարել հարկային մարմնի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ ուղարկել ուղեկցող փաստաթուղթ, անվանումը:

8՝ լրացվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ), որը փորձ է կատարել հարկային մարմնի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ ուղարկել ուղեկցող փաստաթուղթ, հարկ վճարողի հաշվառման համարը:

Ձև N 2

ԿԱՊԻ ԽԱՓԱՆՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

NN ը/կ	Կապի ծառայություն մատուցող կազմակերպության		Փաստաթղթի դուրսգրման փորձի կատարման (կապի խափանման) վայրի հասցեն	Կապի խափանման ժամանակը (րոպեն, ժամը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)		Կազմակերպության, որը փորձ է կատարել հարկային մարմնի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ ուղարկել ուղեկցող փաստաթուղթ	
	անվանումը	ՀՎՀՀ-ն		սկիզբը	ավարտը	անվանումը	ՀՎՀՀ-ն
1	2	3	4	5	6	7	8

1՝ լրացվում է հերթական համարը:

2՝ լրացվում է կապի ծառայություն մատուցող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) անվանումը:

3՝ լրացվում է կապի ծառայություն մատուցող կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) հարկ վճարողի հաշվառման համարը:

4՝ լրացվում է փաստաթղթի դուրսգրման փորձի կատարման (կապի խափանման) վայրի հասցեն:

5՝ լրացվում է կապի խափանման սկիզբը (րոպեն, ժամը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը):

6՝ լրացվում է կապի խափանման ավարտը (րոպեն, ժամը, ամսաթիվը, ամիսը, տարեթիվը):

7՝ լրացվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ), որը փորձ է կատարել հարկային մարմնի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ ուղարկել ուղեկցող փաստաթուղթ, անվանումը:

8՝ լրացվում է կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ), որը փորձ է կատարել հարկային մարմնի էլեկտրոնային տեղեկատվական համակարգ ուղարկել ուղեկցող փաստաթուղթ, հարկ վճարողի հաշվառման համարը:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունիսի 4-ի N 595 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ՝ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՓԱՆՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼՈՒ

1. Սույն կարգով կանոնակարգվում են հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի (այսուհետ՝ համակարգ) խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը հարկային մարմնի կողմից հրապարակվելու հետ կապված հարաբերությունները:

2. Համակարգի խափանման յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հարկային մարմնի պաշտոնական կայքի (www.taxservice.am) «Էլեկտրոնային ծառայություններ» բաժնի «Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման՝ հարկային մարմնի ծրագրային համակարգի խափանումներ» ենթաբաժնում: Սույն կետով սահմանված ենթաբաժնում խափանումների վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլվում է տվյալ օրվա դրությամբ՝ բացառությամբ պլանային խափանումների դեպքերի:

3. Համակարգի խափանման յուրաքանչյուր դեպքի ավարտից անմիջապես հետո սույն կարգի 2-րդ կետով սահմանված ենթաբաժնում խափանման ժամանակահատվածի սկիզբը (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամը, րոպեն) և ավարտը (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամը, րոպեն) տեղադրվում են ինքնաշխատ կերպով:

4. Հարկային մարմնի պլանային աշխատանքներով պայմանավորված խափանումների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է խափանումից առնվազն 2 աշխատանքային օր առաջ:

5. Ուղեկցող համարվող Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման ծրագրի խափանման յուրաքանչյուր դեպք տեղի ունենալուց անմիջապես հետո՝ սույն կարգի 2-րդ կետով սահմանված ենթաբաժնում համակարգն ինքնաշխատ կերպով՝ իրական ժամանակում տեղադրում է խափանման ժամանակահատվածի սկիզբը (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամը, րոպեն)։ Խափանման յուրաքանչյուր դեպքի ավարտից հետո համակարգն ինքնաշխատ կերպով՝ իրական ժամանակում տեղադրում է խափանման ժամանակահատվածի ավարտը (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամը, րոպեն)։

6. Սույն կարգի 3-րդ կետի համաձայն հրապարակված տեղեկատվությունը խմբավորվում է ըստ ամսաթվերի, ամիսների, տարեթվերի և պահպանվում հարկային մարմնի պաշտոնական կայքի համապատասխան ենթաբաժնում՝ առնվազն 3 տարի ժամկետով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ